

ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ

- գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը և այլն:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը անցնում է ջրային միջավայր, մի մասը կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանները, մետաղական հանքարդյունաբերությունը և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտման աղբյուրները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով:

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն:

2023 թվականի 4-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռու մարզում: Ուսումնասիրվել են ֆոնային տարածքներ:

Լոռու մարզում ուսումնասիրված հողերում քրոմի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.7-25.0 անգամ, վանադիումի պարունակությունը՝ 1.1-2.0 անգամ, նիկելի պարունակությունը՝ 6.0-24.5 անգամ, պղնձի պարունակությունը՝ 58.7-102.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 2.5-13.6 անգամ, արսենի պարունակությունը՝ 3.0-36.5 անգամ և մանգանի պարունակությունը՝ 1.1-2.5 անգամ: Կապարի պարունակությունը չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

Լոռու մարզի հողերի աղտոտվածության բաշխվածության քարտեզները ներկայացված են ստորև բերված նկարներում:

Լոռու մարզի հողերի աղտոտվածության բաշխվածությունն ըստ որոշ մետաղների


Նիկել (Ni)



Պղինձ (Cu)




Վանադիում (V)



Քրոմ (Cr)



Յինկ (Zn)



Արսեն (As)

